Արձանագրություն N 5

ԿԵԱԿ-16/2-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Ք.Երևան 16 փետրվարի 2016թ.
ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ Հ.Հաջի-Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ Լ.Կոստանդյան, Օ.Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյան:

1 .Բանակցությունների կազմակերպման մասին
(Հ.Հաջի-Հակոբյան)

Ընդունել ի գիտություն քանի որ 2-րդ և 6-րդ չափաբաժինների համար հայտեր ներկայացրած և բավարար գնահատված կազմակերպությունների՝ գնային առաջարկները գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 44-րդ կետի 5-րդ մասի համաձայն առաջին տեղը զբաղեցնող կազմակերպությանը որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, բավարար գնահատված կազմակերպությունների հետ բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. փետրվարի 16-ին ժամը 12:00-ին, <<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ, ք. Երևան, Իսահակյան 1, 02 սենյակ հասցեով, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Սահմանված ժամկետում բանակցություններին մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

2.Ընթացակարգի գնային առաջարկների մասին
(Հ.Հաջի-Հակոբյան)

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են

Գները նշված են առանց ԱԱՀ					Գները նշված են ներառյալ ԱԱՀ
Գնման առարկայի անվանումը	Ա/Ձ Արման Ասմանգուլյան	«Միսմա» ՍՊԸ	«Պարմա-Պրինտ» ՍՊԸ	«Թասկ» ՍՊԸ	Պայմանագրի կատարման առավելագույն
Հրավիրատոմս	337,500	2,025,000	1,167,000	315,000	990,000
Տոմսագրքույկ		440,000	154,170	275,000	185,000
Բուկլետ	337,500	2,025,000	1,908,300	630,000	1,890,000
Աֆիշա A3	216,000	480,000	1,450,000	204,000	1,440,000
Աֆիշա A2	108,000		1,458,300	720,000	1,200,000
Բաներ	1,724,800		1,650,000	2,500,000	1,680,000

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

3. Չկայացած չափաբաժինը հաստատելու մասին
(Հ.Հաջի-Հակոբյան)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ 2-րդ և 6-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ պայմանագիր չի կնքվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0